

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ
 ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ
 ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ
 ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
1. Կանխարգելիչ միջոցառումներ			
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Համայնքների ղեկավարներ	Մինչև 15.03.2013թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հունները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մինչև 15.03.2013թ.
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Մարզի հիդրոոգեոլոգիական ծառայության պետ	Ամեն օր, սկսած 01.03.2013թ.
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ	Մինչև 15.03.2013թ.
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար:	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ	Մինչև 15.03.2013թ.
8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Մինչև 15.03.2013թ.
9.	Ճշտել արտակարգ իրավիճակներում գործելու և զինվորական մարմինների հետ փոխհամագործակցությունների պլանները:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Մինչև 15.03.2013թ.
2. Հիմնական միջոցառումներ			
10.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ,	Մշտապես

1	2	3	4
	նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	համայնքների ղեկավարներ	
11.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
12.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
13.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Ըստ անհրաժեշտության
14.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
15.	Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև:	«ԱրմենՏել» ՓԲԸ Լոռու տարածքային կենտրոն	
16.	Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն:	«ԼԵՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի տնօրեն	
17.	Հանձնաժողովի պահանջով՝ «Լոռու արտակարգ իրավիճակներ» հիմնադրամից միջոցառումների իրականացման համար հատկացնել անհրաժեշտ գումարներ:	«ԼԱԻ» հիմնադրամի տնօրեն	

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ